

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՆՈՒԹԵՐՈՒՄԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

ՀԱՅԿԵՍՏԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ Է Փ Օ Ն № 255.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւններէ համար վճարում են

իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ:

Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

Եղիսաբէթ Աւետեան Տէր-Յովհաննիսեանց իր որդիներէնցով և հովիտի մէջ Գրիգորեան Շեքմազանեանց ցաւօր սրտի յայտնում են առաջինը իր անմոռանալի ամուսնու, երկրորդինը իրանց անխորտակելի հօր և երրորդը իր թանգագին եղբոր և քրոջ հաւատարմատուն արարածները:

ՅԱԿՈՎԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

Մահը, որ տեղի ստեղծեց հոկտեմբերի 18-ին երեկոյեան 7 ժամին, սրանով յայտնում են ազգականներին, ծանօթներին և հանգուցեալի ընկերներին շնորհ բերել յուզարկաւորութեան, որ տեղի կունենայ կիրակի, հոկտեմբերի 24-ին դէպքի ս. Նշան եկեղեցին և սխառեղից Մոյիվանքի գերեզմանատունը, հոգեհանգիստը ամենայն օր երեկոյեան 6 1/2 ժամից: Վերամիմնակցա փ. № 16:

(Տ. Դ.)

1—2

Իմ խորին շնորհակալութիւնը յայտնում եմ այն այնձանց, հոգեորական և աշխարհական, և իմ ծնականներին, որոնք թէ՛ անձամբ և թէ՛ զբաւոր արտայայտեցին իրանց ցաւացողութիւնը իմ որդու՝ Օգոստին համայնարանի ուսանող:

ՅՈՎԱԿԻՓ ԵՐԶՆԿԵԱՆԻ

Մահվան տարեկիցի առիթով:

Եղիկ Կ. Ե. Երզնկեան

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Օգոստեան գործում. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Յակոբ Տէր-Յովհաննիսեան, Բաղրիական նաւատորմի մասին. Նամակ Միւրազբեկեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՕԳՈՍՏԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՄ

Այն լրացուցիչ տեղեկութիւնները, որոնք ստացված են վաւերացումից, ցոյց են տալիս, որ այս տարվայ բերքը գոհացուցիչ չէ մեր լեռնային մասերում: Հացաբերութիւնը նախ փնտրեցին ամառվայ երաշտից և ապա աշնան վաղահաս ցրտերից: Կարսի նահանգաւորները, աչքի առաջ ունենալով Արդահանի շրջանի անբերրութիւնը, որոշել է բաժանել գիւղացիներին սերմացու հացահատիկներ, որպէս զի արտերը անմշակ չը մնան հետեւեալ տարվայ համար և զի գոյցուն միջոց արվի վերականգնելու իր անտեսութիւնը, որ քայքայված է այս տարվայ անբերրութեամբ: Զգալի կերպով փնտրել են Դանձակի նահանգի լեռնային գիւղերի ցանքները շատ տեղերում և այնտեղ էլ հարց է յարուցված սերմացու հացահատիկներ ձեռք բերելու մասին:

Ամեն անգամ, երբ պահանջ է դրացվում սերմացու բերել տալու ուրիշ տեղերից, հարց է ծագում թէ՛ արդեօք չէ՞ր կարելի օգտվել այդ առիթից ձեռք բերելու աւելի ընտիր տեսակի սերմեր և բարձրել տեղական հացահատիկների որակութիւնը: Անկասկած վատ չէր լինի իրազեկման մի այդպիսի գիտաւորութիւն: Սակայն հէջը դժբաղդութիւնն էլ այն է, որ մեր երկրում սխառեղեկ կերպով գիտաւորութիւններ և փորձեր չեն արված զանազան տեղերի սերմերի վրա և որոշ կերպով չէ հաստատված այս կամ այն տեսակի հացահատիկի պիտանութիւնը երկրի զանազան մասերի համար:

Իսկ քանի որ այդպիսի գիտաւորութիւններ չեն կատարված լուրջ կերպով վրատանգաւոր կը լինէր գիւղացիների գլխին փորձեր անել մեծ տարածութեան վրա և տալ նրանց ձեռքը այնպիսի սերմեր, որոնց վերաբերութեամբ դեռ փաստութիւն չը կայ թէ՛ զբանք կը լինեն իսկապէս արդիւնաւոր:

Մեզ յայտնի են օրինակներ, երբ գիւղացին հրապարակել է խոշոր, գեղեցիկ հատիկներ, նրանց գործ է ածել իրեն սերմացու իր արտերի համար և յետոյ համոզվել է, որ նա սխալվել է իր հաշիւներէ մէջ: Դրա հակառակ յայտնի են և շատ աշուր փորձեր, որոնք և սկիզբ են դարձել տեղական հացահատիկների բարելորման:

Անկասկած անհրաժեշտ է ազնուացնել մեր երկրագործների մօտ եղած արմատների տեսակները, անկասկած, կարելի է լուրջ գիտաւորութիւններ կատարել որոշելու համար սերմացուների յատկութիւնը և պիտանութիւնը այս ու այն տեղում, բայց և այնպէս փորձերը պէտք է անել որոշ գիտաւորութեամբ, իսկ ներկայումս, երբ գիւղացուն հարկաւոր է սերմացու մեծ տարածութեան վրա, պէտք է տալ նրա ձեռքը այն սերմը, որի վերաբերութեամբ փաստութիւն և ապահովութիւն կայ, որ նա իսկապէս բաւարար է:

Այդ պատճառով այժմ հարց չէ կարող լինել փորձեր անելու մասին: Այժմ այն չէ կարելի, որ մենք լաւագոյնը տալու գիտաւորութեամբ առաջարկելու ենք գիւղացուն և անորոշը, այլ այն, որ մենք տանք զուցէ և ոչ լաւագոյն սերմացուն, սակայն բոլորովին փաստելին, որը յստեանայն զէպս կը տայ որոշ հաստատ արդիւնք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ. Ա. Մ. ՈՒՂ

Ելմիածնի «Արարար» ողբում է մեր ժամանակը կրօնական տեսակետից: Բոլոր կրօնական օրգաններն են լայկան դալձի կողմը են ձեռնում աշխարհի անկրօնութեան վրա: Բայց «Արարար» իր վերջին համարում նոյն իսկ ծայրայեղութեան է հասնում զանազաններ: Կա հում էք «Աւետարան» և մեր բրիտանիկութիւնը յօդուածը և կարծում էք թէ աշխարհը գոյութիւն ընկել է յանցանքների և արատների վրէժ և նրա մէջ չէ կարելի գտնել լույսի մի անհոյստ ճառագայթ անգամ: Յետեւորութիւնը փրկարար է շատ զէպսներում, բայց ամեն ինչ, որ ակաւարար, սոհմանայն էլ պիտի ճանաչէ: «Ներքին» մարդիկ այնքան անաւատար չեն եղել, ինչպէս մեր օրերումս, բացահայտում է յօդուածագիրը: Հաւատարմութիւն—մի է ուրանում—չը կայ, բայց երբ համեմատաբար էք խօսում, «Ներքին» էք ասում, չը պիտի մոռանաք, որ հաւատարմութեան ձգտող մարդկութիւնը էլի մի քանի բան արել է, նա ջնջել է ստրկութիւնը, նա իրեն սկզբունք ընդունել է, որ մարդը ձեռնվում է հաւատարմութեան իրաւունքներով: Սրանք դեռ կեանքի մէջ պաշտօնապէս մտած իրողութիւններ են: Իսկ այս վիթխարի գործունէութիւնը, որ ցոյց են տալիս զրկված զասակարգեբը հաւատարմութեան համեմատ համար: Կամ այժմ համաշխարհային կեանքի մէջ աւելի խոշոր ու փայլուն երևոյթ: Յետոյ կրօնական լայկանութիւնը աւելացնում է, որ մարդիկ երբէք «այնքան պակասաւոր արդարադատութիւն չեն ունեցել ինչպէս այժմ»: Միթէ...

Բայց չը վիճենք այս չափազանց տարբարական հարցերի առիթով: «Արարար» յօդուածագիրը այդ չափազանցութիւնները շարունակ են իրար կողքի, ըստ երևոյթի, պաթօսից զրկված, կլանված այն մտքից, որ պէտք է զօրու ու կրակ յայտարարել մեր աշխարհը և ցոյց տալ տանջանքների ու թշուառութիւնների պատճառը: Ո՞րն է այդ պատճառը: Աւետարանը մոռացված է, ասում է կրօնական ամսագիրը, ոչ որ չէ կարգում նրան, չէ ուսումնասիրում: Մի ահագին, զորեղեցից միւղաղական ճառ է արտասանվում մեր ժամանակի և մեր սերունդների դէմ: Մինք կը բերենք մի կտոր այդ ճառից, մի կտոր, որ նշանաւոր է նաև իբրև քերականական կերտուածք, որ ցոյց է տալիս թէ ինչ զարհուրելի պարբերութիւն կարող է հիւսել միապաղաղ, անձայր մի պարբերութիւն: Ահա նա.

Մինչդեռ մեր ուսանող սերունդը բերանացի գիտէ յիշեալ հեղինակների առակները, մինչդեռ նա ամօթալի և ագիտութեան ապացոյց է համարում, եթէ մէկը չի յիշում իսլաւկրաց արշաւանքների թուականը. Սեզուտրիսի թագաւորութիւնը, փրկիկեցոց գիւտերը, Սեզուտրիսի թագաւորութիւնը կամ Օսգոթիւնի և Վեսգոթիւնի արշաւանքը. վերածնութեան, Քրիստոսական յեղափոխութեան, արիւնդուշտ Նապօլէոնի կամ նրա կատարած արիւնդ գործերի շարքն ու ժամանակը, մինչդեռ նա տգէտ է հաւատարմութեան և ամօթից կարծում է Ռուսոյին, Մօլիերին, Հիւգօին, Սօպայանին, Զօլային, Շէքսպիրին, Նիցշէին, Գարսիանին Դաւիթին չը ճանաչելու. նրանց երկերից որ է և զլիւաւորի հետ ծանօթ չը լինել, մինչդեռ մեզանում տգէտ է համարվում և կը համարվի Արտիստին, Գամար-Քաթիլային, Նաբոսին, Նալանդին, Բաֆուն և այլ ժամանակակից սովորական միջակ գրողներին անմասն հայ քրիստոնեան, մէկ հարցըք նրանից, արդեօք նրա դրաւարանում կայ Աւետարանը, նա երբ և ինչ աշխատել է ուղարկութեամբ կարգաւ այն, երբ և ինչ իրան ներդրութիւն տուել է փոքր ինչ ծանօթանալու Աւետարանի վարդապետած սկզբունքների հետ. երբ և ինչ ներդրութիւն տուել է իրան հասկանալու թէ ինչ ահագին սարի կան իր կեանքի և Աւետարանի պահանջները մէջ և դուր պատասխան կը տա նա, որ մեր խօսակցից զարգացած. եւրօպական հեղինակներից ճառող և իրան ևւրօպական լուսակիր համարող ինտելիգենտը ոչ թէ ծանօթ չէ Աւետարանին, ոչ թէ չէ կարգացել և կարիք է չէ զգացել կարգաւորութեան այդ ամենամեծ գիւղը, այլ ուղղակի աւելորդ է համարում, զուցէ նոյն իսկ ստացուցիչ եւ խաւարակութեան ապացոյց, բայց հարկ եղած միջոցին պարծնում է քրիստոնէութեամբ և մի և նոյն ժամանակ գողանում է, կեղծում, ստում, դատաճառում, շնամում և հէջ այդ է ընդունում և այդպէս է հասկանում կեանքը, կեանքի վարդապետութիւնը:

Վերցնենք այստեղից հիմաւոր միտքը—այն, որ Բաթիկի, Դամա Բաթիկայի գրեբը կան ամեն մի գրադարանում, մինչդեռ Աւետարան չէ կարելի գտնել: Շիշը է դա: Բայց երևոյթը մէկից աւելի պատճառներ ունի: Թղթներ հիմնական, ընական պատճառներ, որոնց մասին հարկ է թէ կարողանաք պարզ տեսնալ խօսակցի Բերինը մի պատճառ: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ գիրքը տարածվել կարող է, եթէ նա ունի գիւրամատչելիութիւն բոլոր պայմանները: Արդ՝ հայ ընթերցողը, եթէ նա արտանց էլ կամենայ «Արարատ» այդ տողերից յուզվել, ինչպէս պիտի մօտենայ Աւետարանին, երբ նա չէ հասկանում այդ գիրքը: Ինչ էք արել Աւետարանը ժողովրդականացնելու համար. երբ էք թարգմանել նրան ժողովրդական պարզ լեզուով: Եւ երբ գրութիւն չունի մի գիրք, ինչպէս էք ուզում, որ նա բազմի ամեն մէկի դրաւարանում: Առաջ հարկ է նշել, յետոյ պահանջում: Հէջը վերցրել էք դարձ իմացողներին: Երևաւայնցէք թէ նրանց թիւը շատ ու շատ մեծ է: Դոնէ նրանց համար պատրաստել էք էջան հրատարակութիւններ, որպէս զի ամեն մէկը կարողանայ առնել: Աւետարան որոնողները պէտք է համարձականքներ զիմեն, այն էլ կը գտնեն ամեն տեղ և ինչ գնով: Հինգ տարի

է, ինչ էլմիածնը յայտարարել է թէ Աւետարանը առաւելու պիտի տալէ: Բաժանորդները այսօր էլ դեռ գուր սպասում են:

Բայց մենք պէտք է խոստովանենք, որ յօդուածագիրը նոյն իսկ աւետարան կարգացողներին և հասկացողներին էլ է դատապարտում: Ահա հոգեորականները: Նրանք հօ պիտի աւետարանական լինեն, այս բառի բուն մեկնաբանութիւնը, քանի որ նրանց գործն է ոչ միայն ուսումնասիրել, այլ և ուսուցանել Աւետարանը: Բայց ինչ ենք տեսնում իրապէս:

Մէկը պատրաստվում է Աւետարանի գիտաւորութեան, եկեղեցու սպասուորութեան, ինչ են պահանջում և ինչպէս են հասկանում նրա պարտականութիւնը: Նրանից պահանջում են, որ գիտենայ շարականները, գիտենայ սաղմոսն ու մարտոցը, գիտենայ գրաբար բառերը աշխարհաբար թարգմանութիւնը, իսկ հասկանալու Աւետարանի իրապէսը, նրա գծած շաւղը, սովոր լինել այդ շաւղով ապրելու և գործելու, այդ ոչ որ չէ պահանջում, ոչ որ այդ բանի վրա ուղարկութիւն չէ դարձնում և մենք փնտրում ենք ծիծաղելի բրիտանիաներ՝ հակաքրիստոնէական այնպիսի արտաստեղծութիւն, որոնց մասին զուցէ նոյն իսկ հասկացողութիւն չունէր կողմնակից իրաւաստութեանը, որոնց մասնակցութեամբ և ճշմարտութեամբ հասկացնելու նրա պահանջները, պարզելու նրա գծած շաւղը և այդ ըստ իս միմիայն նրա համար, որ իրանց արիւ խորքում գգում են այն սոսկալի հակասութեանը, որ գոյութիւն ունի այդ վարդապետութեան, նրանց կենցաղավարութեան, իրանց պաշտօնի ու գործի մէջ և այս է այն գլխաւոր պատճառը, որ ճշմարտութիւնը մնում է ծածկված և մեր շուրջը շարունակում է թաղանթի աւրիւն ու սուրբ, առիւթութիւն ու թշնամանքը, գոգութիւն, յափշտակութիւն ու զրկանք և այդ բոլորն արգաւազելու համար թոյլ է մտրված մարդկութիւնը իր ընդունակ, բայց հիւանդոտ ներկայացուցիչների շնորհիւ ստեղծում է առանձին վարդապետութիւն, յայտարարում է գոյութեան պատերազմ և կուտում է ոչ թէ ընդհանուր բարօրութեան համար բնութեան յարուցած արգելքների դէմ, այլ իրար դէմ, իր եղբոր դէմ և չը նայած արտաքին զարդ ու զարգացմանը, շուրջ և փայլի, մարդիկ մնում են նոյն վայրենի հակամիտքով, ինչպէս որ եղել են դարեր առաջ:

Այս սկզբունքները վատ չեն իբրև ինքնամտաբանութիւն, թէ և չը գիտենք, թէ մեր կրօնական ամսագիրը ինչ միջոցներ գիտէ իր մտաւած իրականութիւնը բարեփոխելու համար:

ՅԱԿՈՎ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Հոկտեմբերի 18 ին, կարճատև բայց ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց երգեալ հաւատարմատար Յակոբ Տէր-Յովհաննիսեան, 54 տարեկան հասակում:

Հանգուցեալը իր սկզբնական կրթութիւնը ստացել է Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցում, որտեղ և աւարտել է ուսումը, 15 տարեկան հասակում: Ժամիկ է ապա Թիֆլիսի Լիւսնիքական գիմնազիայի 6-րդ դասարանը, ուր ստանալով հասունութեան վկայական, գնում է Մոսկվա և մտնում համալսարանի բժշկական ֆակուլտետը: Սակայն այդ ֆակուլտետից շուտով տեղափոխվում է իրաւագիտականը, որտեղ և աւարտում է 22 տարեկան հասակում:

Աւարտելով համալսարանական ուսումը, նա գալիս է Թիֆլիս և սկսում է պարագլի փաստաբանութեամբ, սակայն շուտով նա անձնատուր է լինում մանկավարժական և ազգային հրատարակական գործունէութեան: 1875 թ. նա մտնում է ուսուցիչ Ներսիսեան դպրոցը, ապա ընտրվում է Դալիանեան օրիորդական դպրոցի տեսուչ, որպիսի պաշտօնը վարում է ձրեաբար: Շուտով նա նշանակվում է հանգուցեալ Գեորգի Դ. կաթողիկոսից վրաստանի և Իմերէթի թիւի հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների թեմական տեսուչ: Մանկավարժական գործունէութիւնը ստիպում

նոցիմերի վնասները հատուցանվում են:
Ինչից հետագործում են «Рус. Слово» լրագ-
թի ժամցորական բանալի շրջանում,
սակոր հրամանատարի հրահանի համա-
սահմ. օր եռանդով աշխատել է մի

յան ձևաժողովը, որին պաշտօն է տրված որոշել այն ֆունկցիաները, որ չեն ժողովուրդը կրել և զանազան հանգամանքներով: Երեկ յանձնաժողովը բաժանեց գիւղերի բնակիչներին 36 000 բուրլի: Ընդամենը արդէն բաժանված է 66,000 բուրլի, բայց այն գումարները, որ զօրքի դանազան մասերը վճարել են խոտ փրկացնելու համար: Այդքան մանջուրների խուժանը դիմաւորում է յանձնաժողովին «խառն» աղաղակներով, ծունկ է չորում և հիւսիսներում է զանազան ուսուցիչներով:

Եւպոնիական մամուլը Բալթիկի սկզբնական մասին: Բալթիկական էսկադրայի լողման առիթով եւպոնիական լրագրողները շատ ինքնատուրան հղանակով են խոսում: Լրագրողների մեծ մասը յայտնում է, թէ հազիւ բալթիկական էսկադրան կարողանայ հասնել Պէլիանի ծոցը: Պորտ-Արտուրի նաւահանգստում գտնվող ռուսական նաւերը, եւպոնիական լրագրողների կարծիքով, բոլորովին անպատրաստ են և չեն կարող օգնութիւն ցոյց տալ Բալթիկական էսկադրային: Այդ ձեռնարկութեան գլխաւոր շահը եւպոնիայի համար կայանում է նրանում, որ այժմ հնարաւորութիւն կը լինի որոշել թէ պետութիւնները որոնք կը խախտեն իրանց չէզոքութիւնը յօդուտ Ռուսաստանի:

Անգլիան կամեցել է յետ պահել Բալթիկի սկզբնական: Բերլինից հեռագրում են «H. Bp.» լրագրին, թէ ըստ լրագրական տեղեկութիւնների, Անգլիան ռուսական կառավարութեան ցաւակցութիւնը ստանալուց առաջ իբր թէ առաջարկել է Միացեալ Նահանգներին անգլիացիների հետ դաշնակցութեամբ կանգնեցնել ռուսական էսկադրան ճանապարհին և թոյլ չը տալ քնար: Սակայն Ամերիկան մերժել է այդ առաջարկութիւնը: Գերմանական դիպլոմատները այդ լուրին հաւատ չեն ընծայում:

Եւպոնիայում սպառի գրգռված են Գերմանիայի դէմ: Տօկիոյից հաղորդում են «Central News» լրագրին, թէ եւպոնիայում տիրում է սաստիկ զայրոյթ Գերմանիայի դէմ, որը, իբր թէ հայթայթել է Ռուսաստանին զէնք, ռազմավարները և նաւերը եւպոնիական մամուլը մանաւանդ շնչում է այն հանգամանքի վրա, որ բալթիկական էսկադրան ուղեկցում է ամերիկայի փոխադրանաւերի մի ամբողջ նաւատուրը, որ տալիս են անգլո-աւստրալիական համալորեցման ընկերութիւնը, գերմանական Լոյզգեր և գերմանական ուրիշ ընկերութիւնները: Բոլոր այդ փաստերը, եւպոնիական մամուլի կարծիքով, պարզ ցոյց են տալիս, որ Գերմանիան չէ յարգում չէզոքութիւնը և չէ կամենում հաշուել տանել միջազգային իրաւունքի կանոնները: Եւպոնիական լրագրողները խոսում են ապա թէ մինչև այժմ եւպոնիական կառավարութիւնը ոչ մի միջոց ձեռք չէ առել Գերմանիայի դէմ, բայց այն բոլորը, ինչ որ թոյլատրել է իրան Գերմանիան, արդէն այժմ սաստիկ ֆլուս է հասցրել գերմանական առևտրին եւպոնիայում և այդպիսի դրութեան հետեւանքները շատ ծանր կը լինեն Գերմանիայի համար: Գերմանիայի դէմ այդ մեղադրութիւններին պատասխանում է Բերլինի «National Zeitung» լրագիրը: «Եւպոնացիները, առում է նա, կրկնելով իրանց մեղադրանքները Գերմանիայի դէմ, լուրս են տալիս այն հետաքրքրական փաստի մասին, որ Անգլիան պատերազմի ընթացքում ծախել է եւպոնիային 30 նաւից աւելի: Անգլիան հայթայթում է եւպոնիային գրեթէ ամբողջ ռազմային նիւթը, որը եւպոնիական չէ կարող պատրաստել իր երկրում: Միայն այն պատուէրները, որոնք չեն կարող կատարվել Անգլիայում այնպէս լաւ, ինչպէս միւս երկրներում, ուղղվում են Ամերիկա և Գերմանիա: Բայց նոյն իսկ այն պատուէրները, որոնք կատարվում են Գերմանիայում, չեն ուղարկվում անմիջապէս եւպոնիայ, այլ ուղարկվում են առաջ Անգլիա, որպէս զի եւպոնացիների բարեկամները կարողանան օգուտ քաղել այդ պատերազմից: (C. II. B&L.)

Ռուս գեներալը եւպոնացիների մասին: Հեռաւոր Արեւելքից Մոսկվա է եկել գեներալ-մայոր Մարսիմովիչը, որի հետ «Рус. Слово» լրագիրը աշխատակիցը տեսակցութիւն է ունեցել: Նա յայտնեց, որ եւպոնացիները իր վրա գեղեցիկ տպաւորութիւն են թողել: Նրանք սաստիկ ճարպիկ և խորամանկ են: Եւպոնիական մամուլը, որ նրանց ոչ որ չէ սպասում: Մանեն գալիս դառնալի մէջ, ոչ որ նրանց չէ տեսնում և յանկարծ ցցվում են հէնց մեր խրամատներին առաջ: Եւ ինչպէս կարողանում են նրանք դիմակաւորել դրբերի ամբողջութիւնը: Ստեղծում են արուեստական դէկորացիա և նրա ետեւում հիանալի կերպով տեղադրվում են: Գեներալ Մարսիմովիչը հի-

ւանդանցում վերաւոր եւպոնացիների հետ միասին պառկել է և նա հաստատում է նրանց խնդիրները: (նոյն իսկ գիւղերները համեմատաբար զարգացած են), նրանց սէրը գէպի գործը, հետաքրքրութիւնը: Տեսնում էր մէկը ձեռքը գաճի մէջ ունի, բայց միւս ձեռքով գրում է—սովորում է ռուսաց լեզուն, գրելով բառերը ռուսերէն և եւպոնացիներ: Դէպի ռուսները նրանք շատ սիրաշահ են: Չաւրախեցութիւն, առեւտրութիւն արտադրութիւն է եղակի գէպերում: Այդ էլ առաջ էր, երբ եւպոնական զօրքի մէջ այն համոզմունքն էր տիրում, թէ ռուսները եւպոնական վերաւորների հետ անգլաբար են վարվում: Եւպոնացիները շատ ճշգրտաբար են և շրջանայեաց: Ամեն մի ունեւոր-օֆիցեր ունի մի յուշատետր, որի մէջ գրում է թէ ով է նա, որտեղ է մասնակցել:

Տեղեկութիւններ Պորտ-Արտուրի մասին: «Echo de Paris» լրագրի թղթակիցը մի քանի տեղեկութիւններ է հաղորդում Պորտ-Արտուրի մասին, որ ստացել է Չիֆուից: Եւպոնացիները վճռել են շուտով միջազգային Պորտ-Արտուրը աւելի կատարել շտուրմի, քան մինչև այսօր եղածները: Դաւնի միջոցով բերված 300 թուղանօթները դրվել են Դագուշանի և Ուսէսարի մէջ տեղ, կազմելով ուժեղ արտւելքական դիրք: Պորտ-Արտուրից Չիֆու և կամները առում են, որ եւպոնացիները որոշել են ինչ զնով և լինի գրաւել բերդը մի ամսի ընթացքում: (Русь)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք հաղորդեցինք անցեալ անգամ, որ Բոստոնում կայացաւ խաղաղութեան XIII միջազգային կոնգրէսը, որ բացվեց հոկտեմբերի 3-ին (ն. տ.) Միացեալ Նահանգներին արտաքին գործերի մինիստր պ. Հէյն ճառով: Կոնգրէսը, ի միջի այլոց զբաղվեց և մակերօնական ու հայկական հարցերով: Վերջին հարցով կոնգրէսը զբաղվեց հոկտեմբերի 7-ին: Նիւտրոններէս էր և կաթոլիկոսական պատգամաւորութիւնը, բաղկացած Եւպոնացի արքեպիսկոպոս Այվաթեանից, Յովսէփ Եպիսկոպոս Սարաջեանից և թ. Լորիս-Մէլիքեանից: Ատենաբաններն Յորդէրի կրօն Հէրպէրդ Պրորոս, գործարար Քլարկ, Բենզոլ Քրիմ և Լորիս-Մէլիքեան: Ի վերջոյ կոնգրէսը կայացրեց հետեւեալ որոշումը: «Նկատելով որ Հայաստանում կայուցութիւնը հետզհետէ վատթարանում է և շարունակվում են ժողով դաւան վարպա կոտորածները, նկատելով որ Մակեդոնիայի համար պետութիւնների ծրագրած բարենորոգումները անբնական են երկրի խաղաղութիւնը ապահովելու, նկատելով Արեւելեան հարցի միջազգային բնաւորութիւնը և Բերլինի դաշնագրով Մեծ պետութիւնների միջնամուտ պատասխանատուութիւնը այնտեղ ստեղծված անհիշկալ կայսրութեան վերաբերմամբ—ներկայ համաժողովը կրչում է անում եւրոպական կառավարութիւններին և Միացեալ Նահանգներին, որպէս զի անմիջապէս նկատի առնեն թիւրքիայի կայսրութեան մէջ ապրող զանազան ժողովուրդների տառապանքներին վերջ դնելու համար և սահմանափակելու կամ վերջացնելու համար սուլթանի ուղղակի իշխանութիւնը այդ ժողովուրդների վրա»:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՍԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՑ

19 հոկտեմբերի

Տօկիո, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): Ականջ պայթելու ժամանակ Մօլոփում սպանվեցին 50 նաւաստիներ:

ԼՕՆԴՈՆ: (Բէյտէր) գործակալութեան թղթակիցը ռուսական արեւելեան բանակում հաղորդում է, որ փոխարքան Խարկովից ճանապարհ է ընկնում դէպի Զրիմ: Կուրսակալները կը շարունակէ անձամբ ղեկավարել բանակը մինչև նշանակված գեներալների գալուտը: և այն ժամանակ նա իրան կը թողնէ զլրաւոր հրամանատարութիւնը կենտրոնական տեղից: Բանակի դրութիւնը չէ փոխված: Եւպոնացիները օժանդակ զօրքեր ուղարկեցին Պորտ-Արտուրից Լեաօնան: Ռուսները այժմ թւով պակաս են եւպոնացիներին: Սպասում են եւպոնացիների անյապաղ արշաւանքին:

ԼՕՆԴՈՆ, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): Թագաւորը պալատ կանչեց Լանսդաունին: Ունկնդրութիւնը երկար շարունակվեց:

ՏԵՒԻՆԶԻՆ: (Բէյտէր): Տէլինից հաղորդում են, որ գետի և քաղաքի մէջ գտնված դաշտավայրը կտրուված է խրամատներով և փոսերով, որոնք մէջ ցցված են սուր ցիցեր: Չի-նական կառավարութիւնը պաշտօնապէս արգելեց չէզոքութիւնը խախտել միջերեսի հասցանիով պատերազմող կողմերին և զօրքեր ուղարկեց Շանխայտուն:

ՍՕՖԻԱ: Պետութեան թագաւորի գալուց յետոյ, լոյս տեսած լրագրիները, որոնք յոռետես էին տրամադրված, այժմ շնորհապէս ողջունում են նրա գալուտը բոլորական երկրի և բարեմաղթում են, որ Բալթիկի և Սեբերիան մի կողմ թողնեն մանր տարածայնութիւնները և ձեռք ձեռքի տուած ընթանան տնտեսական, քաղաքական և կուլտուրական ասպարէզում:

ԼՕՆԴՈՆ, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): «Ստանդարտ» ասում է, որ չորս պատուիրակներ, որոնք երեքշաբթի ուղևորվեցին Հիւսիսային Ժողովրդական Նաւարանի նաւաւորի հետ, որոնք իրենց նաւերին բաւարարեցին իրենց զանազան պահանջներին: Սկզբնական բնութիւնը կատարված էր ծովային միւնիստրութեան հրամանով: Գաղտնիքակները աչքի անցրին 20 ձկնորսական նաւեր, որոնցից մի քանիսները լուրջ կերպով ֆլաւված են առաւելից և գնդաձիգներով: Միւս նաւերը աւելի պակաս են ֆլաւված: Մի քանի գէպերում ցանցերը և ձկնորսական գործիքների մի քանի պարագաները ոչնչացված էին կամ համարանակներ էին դարձրված:

20 հոկտեմբերի
ԴՕՐԵՆԱ, 19 հոկտեմբերի: (Հալաս): Դանիական նաւապետ Հանզօնը յայտնեց, որ իրան վերադարձած ցուցումները հանգիստում են լինելու հնարված բաներ: Նա չուր չէ մըտել և չէ տեսել ոչ առանձին, ոչ հապոնացիներ, իսկ ձկնորսների զբաղմունքներն իրան բոլորովին սովորական երևացին:

ԴԻՐԻՍԼԱՍՈՒ, 15 հոկտեմբերի: (Բէյտէր): Լուսիթի նաւիկով, բերդապահ զօրքը պատրաստ է դէրբ բռնելու ժայռերի վրա: Հաւատացնում են, որ այստեղ գտնվող անգլիական զինուորականները նորից հրաման են ստացել պատրաստ լինել ծով դուրս գալու առաջին հրամանի համաձայն: Այստեղ արտադրված ռազմական գործունէութիւնը անհասկալի է պատճառում: Սրազանքի թնդանութիւնի ծառայողները գրաւեցին իրանց դիրքերը: Հետեւեալ զօրախմբերը դասաւորվել են ծովափերի վրա: Եւկուրական ցրացուցիչները խոտուծեցին պահպանվում են:

ԼՕՆԴՈՆ, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): Այսօր Լոնդոնում տիրում է այն կարծիքը, որ անգլո-ռուսական բանակցութիւններն այնքան էլ աւելի չեն առաջ գնում:

ԼՕՆԴՈՆ, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): Բէյն-Կէնթօքին ընդունվեց թագաւորի մօտ ունկնդրութիւն:

ԼՕՆԴՈՆ, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): Բէյտէրի գործակալութեան Կուրօկի բանակում գտնվող թղթակիցը հաղորդում է, որ ռուսները հոկտեմբերի 18-ին գնդակոծում էին եւպոնացիներին իրանց դիրքերից: Հրացանի և թնդանութիւնի զօրքը կրակ շարունակվում էր մինչև լուսաւաց:

ՎԻԳՕ, 19 հոկտեմբերի: (Հալաս): Ռուսական էսկադրան մեկնեց առաւօտեան ժամը 8-ին: Նրա հետից գնում է սպանիական «Էստրամադուրա» կրէյսերը:

ՏԱՆԺԷՐ, 17 հոկտեմբերի: (Հալաս): Առաւօտեան տեղի ունեցաւ ռուսական «Աւրորա» կրէյսերի առաւ քառասայի թաղում, որ վախճանվեց չափազանց ուշացած անդամաւորութիւնից: Նաւերի պաշար վերցնելը շարունակվում է: Տանժէրի խառնակներում եղած բոլոր ապրանքները գտնվեցին առանց որ և է ֆնացորդների: Նաւերի վրա բռնել են կենդանի տաւար: Ժամանակ է մէկ փոխադրանաւ ածուխ բռնված:

20 հոկտեմբերի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայել բարեհաճեց, որ ժամանակամիջոցից դուրս ծառայութեան մէջ գտնվող զինուորների ծառայութեան ժամանակը նաւատորմում եւպոնիայի հետ պատերազմ յայտարարելու օրից մինչև նաւատորմի խաղաղ վերադարձը օրից մինչև նաւատորմի վերադարձը իրենց նաւերին, որոնք սահմանված են ժամանակավիջից դուրս կատարվող ծառայութեան համար:

ՉԻՖԻՆ, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): «Բեյն-տեյն» ակնակիր նաւի հրամանատար Բօչօֆովսկին և նրա կօմանդան նստեցին Շանխայ գնացող նաւ, բայց նրանք յանկարծ Չիֆու վերադարձան, որովհետև չինական կառավարութիւնը վերջին քաղաքի հրաժարվեց իր տուած թոյլտուութիւնից:

ԼՕՆԴՈՆ, 19 հոկտ. (Բէյտէր): Արտաքին գործերի մինիստրութիւնը հրատարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը: «Նախ քան ռուսաց էսկադրան թողնէր Վիգօն, ռուսաց ծովապետը հրահանգ ստացաւ ցուցմունքով:

ռուսական էսկադրան ներկութիւններ չը պատճառէ և չարգելէ չէզոք առևտրին: Հեռաւոր Արեւելք գնալիս: Ռուսաստանի ստանձնած պարտաւորութիւնների համաձայն, ռուսական էսկադրայի չորս օֆիցեր ֆնացին Վիգօնում: Ներկայումս երկու պետութիւնները ընկնում են այն պայմանները, որոնցով Հիւսիսային ծովի վրա տեղի ունեցած միջնադէպը կառավարվել միջազգային յանձնաժողովի ընտրութեան, որին կը յանձնվի ենթադրված ընտրութեան վարումը:—Հասարակութեան և լրագրիների մէջ տարածված լուրերի առիթով անգլիական էսկադրայի Գերբալտարից մեկնելու և օֆիցերների ժողով գումարեղու վերաբերմամբ, «Բէյտէր» գործակալութեան թղթակիցը Գերբալտարում հեռագրում է, թէ էսկադրան խախտել ձգած կանգնած է, թէ և պատրաստ է մեկնելու: Ինչ վերաբերում է խորհրդին, տեղական իշխանութիւնը ընդունեց, իբրև կանոն գումարել օֆիցերներին ամեն օր, նահանգապետի բնակարանում:—Գերբալտարի լրագրիները հաղորդում են, որ բերդի պահակազօրքը զենքի է կանչված:

ՊԱՆՄԱ: «Բերբեղատեղ» զրահաւոր և հինգ հակաակնաւ հասան և փոխանակեցին որոշված ողջոյնը: Անգլիական էսկադրան Վիլա-Գայցիում մեկնեց նաւահանգստից:

ԴԻՐԻՍԼԱՍՈՒ: Բէյտէր: Այստեղի պահակազօրքը արտիլերիայի յիւնուներով վաշտը, որ հասել է Սեբեր-Լէօնէից, ուղղվելով Անգլիա, հրաման ստացաւ ֆնալ այստեղ:

ՏՕԿԻՕ, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): Պորտ-Արտուրի մօտի եւպոնական բանակի զեկուցումը, հոկտ. 13-ից. «Եւպոնական ալ թխի մի մասը գրոհ տուեց Սունշուանի խրամատների վրա: Կենտրոնի սիւնը յարձակվեց Էթլունդանի և Պալենոնանի հարաւային մասի վրա: Այն ժամանակ, երբ եւպոնացիները գրաւեցին ցոյց տուած կէտերը, հարեան ռուսական մարութիւնները կենտրոնացրին կրակը այն տեղում, ուր շուտով կարէ Էթլունդանի լանջերի մէկի վրա պայթեց աւանակ, բայց եւպոնացիները չը ֆնալեցին: Գիշերը եւպոնական թնդանութիւնը ուժեղութեան էթլունդանը և ուրիշ երեք ամբողջներ, որպէս զի խախտան նրանց վրա կատարվող աշխատութիւնները Սունշուանի և Էթլունդանի պահակազօրքը գիշերը կատարեց մի քանի հակահարուած: Հոկտեմբերի 14-ին շարունակվեց բերդի ուժեղացումը պաշարողական թնդանութիւնով: Կուի ամենակարեւոր հետեւանքը եղաւ այն, որ անպէտքացաւ ամբողջ թնդանութիւնը Նիկոլաւանից դէպի արեւելք, մի ուրիշը անպէտքացաւ այն բանակում, որ բարձրանում է հիւսիս-արեւելեան ամբողջութեան գծի և Էթլունդանի ամբողջի միջև, երբորդ յիշեալ ամբողջի ծածկված խրամատներում, երկու փոքր թնդանութիւն և մի թնդանութիւն ամբողջի արեւելեան ճակատի վրա: Եւպոնական ռուսները ոչնչացրին ծածկված խրամատները Էթլունդանում, շարքեցին երկու գնդակաձիգ Սանշուանում և փշրել են երկու հետախուսի: Գիշերային հակադարձակումների ժամանակ ռուսները գործ էին դնում ամեն տեսակ միջոցներ, որ յետ միջին եւպոնական յարձակումը և օգտվում էին ձեռքի ուժեղութեամբ: Հոկտ. 15-ին ուժեղացումը շատ ուժեղ էր: Ռուսները հողի ստորակներով լցրեցին բանկէտի ճիւղը, որ աւելված էր ուժեղացումը: Եւպոնացիները Նիկոլաւանից հիւսիսային մասում, արեւելեան ճակատի վրա պայթեցրվեց վառոտային նիւղը և շարքեց զաշտային մի թնդանութիւն: Սոյուաշան ամբողջում վայր գլորվեց տասներկու դիւմանոց մի թնդանութիւն: Նաւակցին փակ խրամատները և երկաթաթիւնային ցանկապատները: 203 մետր բարձրութեամբ մի բլրից նկատվեցին երկու հրթիւ: մինը՝ քաղաքի կողմում, իսկ միւսը՝ արհեստանոցներում, Ուսիսային ստորոտում: Հոկտ. 16-ին ուժեղացումը շարունակվեց աւելի սաստկօրէն: Լուսաբացին հարեւր հողի ռուսներ յարձակվեցին ակնային գալէթայի վրա, որ ձգված է Էթլունդանի ուղղութեամբ, բայց յետ մղվեցին մեծ կորուստներով: Միաժամանակ ռուսները մի ուրիշ զօրախումբ, 100 հոգուց բաղկացած յարձակվեց մի ուրիշ գալէթայի վրա, որ եւպոնացիները պղծել էին Սունշուանի ուղղութեամբ: Եւպոնացիները եռանդով պաշտպանվում էին, բայց ստիպվեցին դատարկել գալէթայի մի մասը:

ՎԻԳՕ, 19 հոկտեմբերի: (Բէյտէր): Յրանստիական հիւպատոսը յայտնեց, որ ռուսական էսկադրան մեկնեց Տանժէր, այն քաղաքին, որ անգլիական «Պալոնտե» կրէյսերը Ուոկէր կօմանդանի հետ անցնում էր Վիգօի առջևից, ուղղվելով դէպի Վիլա—Գայցիօ:

